## Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆՅԱՆ

Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը (ավազանի անունով՝ Վազգեն) ծնվել է 1971 թ. մայիսի 20-ին Գյումրիում:

1978-1988 թթ. սովորել է Երևանի թիվ 156 դպրոցում:

1988 թ. ընդունվել է Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1994 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Հոգևոր Ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ՝ «Խոսրով եպիսկոպոս Անձևացի. կենսագրական գծեր» և «Բացայայտութիւն Կարգաց Եկեղեցւոյ. բնագիրն ու աստվածաբանությունը» թեմայով:

1995 թ. հունիսի 23-ին, ձեռամբ երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Գևորգյան հոգևոր ճեմարանում դասավանդել է եկեղեցական երաժշտություն և Ս. Պատարագի մեկնություն առարկաները: Աշխատակցել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրությանը:

1996 թ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր: Միաժամանակ դասավանդել է Սևանի Վազգենյան Դպրանոցում:

1998 թ. մեկնել է Անգլիա՝ ուսումը կատարելագործելու Մըրֆիլդի «Ս. Հարություն» աստվածաբանական քոլեջում և Լիդզի համալսարանում:

2000 թ. հուլիսին, ավարտելով ուսումնառությունը, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ վերադարձել է Մայր Աթոռ և օգոստոսի 1-ին նշանակվել Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ:

2002 թ. փետրվարին նշանակվել է Տեղեկատվական համակարգի խորհրդի նախագահ՝ շարունակելով տեսչի պարտականությունները:

2002 թ. մարտին պաշտպանելով «Հիվանդաց օծման խորհրդի խնդիրը Հայ Եկեղեցում» թեզը, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճաններ:

2002 թ. հոկտեմբերի 14-ից Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ:

2003 թ. մայիսի 31-ին Կանադահայոց թեմի 20-րդ պատգամավորական ժողովում ընտրվել է Կանադայի հայոց թեմի առաջնորդ:

2003 թ. հունիսի 22-ին՝ Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնին, ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս: